

Վարկ տրամադրելու համար պահանջվող փաստաթղթերը

Իրավաբանական անձանց կողմից ներկայացվում է.

1. Դիմում-հայտ Բանկի գործադիր տնօրենի (մասնաճյուղերի կառավարիչների, ՀՄՎ պետի) անունով, որտեղ նշվում են վարկի գումարը, ժամկետը, նպատակը, ապահովության տեսակը,
2. Անհրաժեշտության դեպքում, վարկի օգտագործման տեխնիկա-տնտեսական հիմնավորվածությունը (գործարար ծրագիրը),
3. Պետեզիստի վկայականի պատճեն (գործադիր մարմնի վերաբերյալ ներդիրը պարտադիր է),
4. Իրավաբանական անձի կանոնադրության պատճենը,
5. Տեղեկանք պետական ռեգիստրից մասնակիցների վերաբերյալ, տնօրենի և կանոնադրության փոփոխությունների վերաբերյալ: Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք «Հայաստանի կենտրոնական ռեգիստրի» ԲԲԸ-ից բաժնետերերի վերաբերյալ և տեղեկանք պետական ռեգիստրից տնօրենի և կանոնադրության փոփոխությունների վերաբերյալ: Տվյալ փաստաթղթերը չեն պահանջվում այն իրավաբանական անձանց համար, որոնց դեպքում վարկի ստացման որոշումը իրավաբանական անձի կանոնադրության համաձայն կարող է կայացվել տնօրենի կողմից,
6. Իրավասու մարմնի որոշումը վարկ ստանալու և գույքը գրավ դնելու վերաբերյալ,
7. Հարկային կող (պատճեն), ՀՎՀՀ,
8. Հաշվապահական հաշվետվությունների փաթեթ (հաշվեկշիռ, ֆինանսական այլ հաշվետվություններ), հարկատեսակների հաշվարկներ և այլն՝ վերջին հաշվետու ժամանակահատվածի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում կարող է պահանջվել հաշվապահական հաշվետվությունների փաթեթի հարկային մարմնի կողմից հաստատված օրինակը (պատճեն): Բանկը, անհրաժեշտության դեպքում, կարող է պահանջել նաև աուդիտի եզրակացություն,
9. Անհրաժեշտության դեպքում (10 մլն. դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկերի դեպքում՝ պարտադիր)՝ համապատասխան շրջանի հարկային մարմնից պետական բյուջեի հետ փոխադարձ հաշվարկների ակտը կամ տեղեկանք բյուջեի հանդեպ պարտավորությունների վերաբերյալ,
10. Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկանք (անհրաժեշտության դեպքում՝ վերծանված),
11. Վարկի ապահովություն հանդիսացող գրավի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր՝ սեփականության վկայականներ, մաքսային հայտարարագրեր, հաշիվ-ապրանքագրեր և գրավադրման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր,
12. Հիմնական միջոցների ցանկը (անհրաժեշտության դեպքում),
13. Անհրաժեշտության դեպքում ներկայացվում է տեղեկանք համապատասխան մարմնից առ այն, որ իր գործունեությունը շրջակա միջավայրի համար վտանգ չի ներկայացնի,
14. Արտոնագրերի (առկայության դեպքում) պատճենները,
15. Գրավատու հանդիսացող անձի ամուսնության (ամուսնալուծության, ամուսնու մահվան) վկայականի պատճենը,
16. Տնօրենի և սեփականատերերի անձնագրերի պատճենները,
17. Սեփականատիրոջ/սեփականատերերի կամ նրանց հետ փոխկապակցված անձանց անձնական երաշխավորություն (անհրաժեշտության դեպքում),
18. Տեղեկություններ այն իրավաբանական անձի մասին, որտեղ տվյալ իրավաբանական անձը ունի 10% և ավելի փայամասնակցություն (անհրաժեշտության դեպքում):

Անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացվում է.

1. Դիմում-հայտ Բանկի գործադիր տնօրենի (մասնաճյուղերի կառավարիչների, ՀՄՎ պետի) անունով, որտեղ նշվում է վարկի գումարը, ժամկետը, նպատակը, ապահովության տեսակը,
2. Պետ ռեգիստրի վկայականը (պատճեն),
3. Հարկային կող (պատճեն), ՀՎՀՀ,

4. Անհրաժեշտության դեպքում (10 մլն. դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկերի դեպքում՝ պարտադիր)՝ համապատասխան շրջանի հարկային մարմնից պետական բյուջեի հետ փոխադարձ հաշվարկների ակտը կամ տեղեկանք բյուջեի հանդեպ պարտավորությունների վերաբերյալ,
5. Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկանք (անհրաժեշտության դեպքում՝ վերծանված),
6. Վարկի ապահովություն հանդիսացող գրավի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր՝ սեփականության վկայականներ, մաքսային հայտարարագրեր, հաշիվ-ապրանքագրեր և գրավադրման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր,
7. Արտոնագրերի (առկայության դեպքում) պատճենները,
8. Անձնագրի պատճեն,
9. Ամուսնության (ամուսնալուծության, ամուսնու մահվան) վկայականի պատճեն,
10. Այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում):

Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվում է.

1. Դիմում Բանկի գործադիր տնօրենի (մասնաճյուղերի կառավարիչների, Հաճախորդների սպասարկման վարչության և Պլաստիկ քարտերի վարչության պետի) անունով, որտեղ նշվում է վարկի գումարը, ժամկետը, նպատակը, ապահովության տեսակը,
2. Վարկի ապահովություն հանդիսացող գրավի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր՝ սեփականության վկայականներ, նոտարական հաստատումով համաձայնություններ, տեխնիկական անձնագրեր և գրավադրման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր,
3. Մանրամասն տեղեկություններ (իրավաբանական և ֆինանսական փաստաթղթեր) այն իրավաբանական անձի մասին, որտեղ տվյալ ֆիզիկական անձը ունի 10% և ավելի փայամասնակցություն,
4. Ամուսնության (ամուսնալուծության, ամուսնու մահվան) վկայականի պատճեն,
5. 18-ից 23 տարեկան անձինք՝ ծնողների համաձայնությունը վարկի տրամադրման և պարտավորագիր վարկի մարման վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում),
6. Անձնագրի պատճեն,
7. Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր (երաշխավորություններ, տեղեկանքներ աշխատավայրից և բնակավայրից):

Ուշադրություն.

Ձեր պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում Ձեր պարտքի վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն վարկային ռեգիստր և վարկային բյուրո (աքոա):

Ուշադրություն.

Վատ վարկային պատմություն ունենալը Ձեզ համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս:

Ուշադրություն.

Ձեր կողմից գրավադրված գույքը (տունը, մեքենան կամ այլ) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր վարկային պարտավորությունները:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՄԿԶԲՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ /վերանորոգում/

1. Անձնագրերի պատճեններ /ընտանիքի անդամների/, 2 օրինակ
2. Ամուսնության վկայականի պատճենը /առկայության դեպքում/
3. Տեղեկանք բնակավայրից

4. Տեղեկանք աշխատավայրից /անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն նախորդ 12 ամսվա ընթացքում վճարված գուտ աշխատավարձի, եկամտահարկի, սոցապ. վճարումների չափերի վերաբերյալ և աշխատանքային գրքույկների պատճեններ/
5. Մեփականության վկայականի պատճենը /գրավադրվող բնակարանի/, 3 օրինակ /անհրաժեշտության դեպքում վկայականի տրամադրման հիմք հանդիսացող փաստաթղթի պատճենը/
6. Վերանորոգման ծախսերի նախահաշիվը /ծախսերը ըստ հոդվածների/
7. Սոցիալական քարտի պատճեն
8. Տեղեկանք, որ տվյալ բնակարանը արգելանքի տակ չէ, /բնօրինակը և 1 պատճեն/, ներկայացնել վարկի հաստատումից հետո
9. Դիպլոմի պատճեն /առկայության դեպքում/

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՄԿԶԲՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ /ձեռքբերում/

1. Անձնագրերի պատճեններ /ընտանիքի անդամների/, 2 օրինակ
2. Ամուսնության վկայականի պատճենը /առկայության դեպքում/
3. Տեղեկանք բնակավայրից
4. Ձեռքբերվող բնակարանի 3-րդ ձև /անձնագրային սեղանից/
5. Տեղեկանք աշխատավայրից /անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն նախորդ 12 ամսվա ընթացքում վճարված գուտ աշխատավարձի, եկամտահարկի, սոցապ. վճարումների չափերի վերաբերյալ և աշխատ. գրքույկների պատճեններ/
6. Սոցիալական քարտի պատճեն: 7. Մեփականության վկայականի պատճենը /գնվող բնակարանի/, 3 օրինակ /անհրաժեշտության դեպքում վկայականի տրամադրման հիմք հանդիսացող փաստաթղթի պատճենը/
8. Տեղեկանք, որ տվյալ բնակարանը արգելանքի տակ չէ, /բնօրինակը և 1 պատճեն/, ներկայացնել վարկի հաստատումից հետո,
9. Վաճառողի /սեփականատերերի/ անձնագրի պատճենը, 2 օրինակ
10. Դիպլոմի պատճեն /առկայության դեպքում/